



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2022 թվականի թիվ 85-Ա

ք. Երևան

#### «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԱԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի ապրիլի 25-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 11 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է հեղինակագրված «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի ընթացքում օրենքով արգելված ժամանակահատվածում՝ գովազդի հեռարձակման սահմանափակումների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի ապրիլի 25-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի ապրիլի 25-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ արձանագրության՝ Հեռարձակողի «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի կողմից «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին հեռարձակվել է գովազդ, մասնավորապես.

- «ID Bank»-ի «Rocket Line» (Ռոկեթ Լայն) ծառայության գովազդ, ժամը՝ 19:23:08-19:24:09, 20:20:42-20:21:42, 20:31:22-20:32:23 և 21:24:08-21:25:09.
- «MEK» (ՄԵԿ) կահույքի սրահի գովազդ, ժամը՝ 19:24:09-19:25:09, 20:21:42-20:22:43, 20:32:23-20:33:23 և 21:25:09-21:26:09:

Հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 28-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողի կողմից վարչական վարույթի ընթացքում որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացվել Հանձնաժողով:

### ***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է Օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է.

«Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր»:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանում է.

«4. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:»:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից հեղինակագործված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին գուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա, իսկ Հեռարձակողն իր տեղեկատվությունը տարածում է ոչ միայն համացանցի միջոցով, ուստի Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են Հեռարձակողի համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և սվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝

1) **տեսալսողական մեդիածառայություն** մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) **հեղինակագործում**՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողները իրենց տեսալսողական ծրագրերը հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով սահմանող այն դրույթները, որոնք սահմանում են գովազդի հեռարձակման որոշակի պահանջներ ու սահմանափակումներ և այս վարույթի շրջանակներում՝ Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողը պետության հայտարարած սգո և հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին պետք է գովազդի հեռարձակում չիրականացնի:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի ապրիլի 24-ին (ժամը՝ 19:23:08-19:24:09, 20:20:42-20:21:42, 20:31:22-20:32:23 և 21:24:08-21:25:09)՝ ցուցադրվել է «ID Bank»-ի «Rocket Line» (Ռոկետ Լայն) ծառայության գովազդ և նույն օրը (ժամը՝ 19:24:09-19:25:09, 20:21:42-20:22:43, 20:32:23-20:33:23 և 21:25:09-21:26:09) ցուցադրվել է «MEK» (ՄԵԿ) կահույքի սրահի գովազդը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողի համար գովազդը հեռարձակելու արգելող դրույթ է սահմանված՝ մասնավորապես՝ արգելվում է պետության հայտարարած սգո և հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին գովազդի ցուցադրումը, սակայն Հեռարձակողի կողմից չեն պահպանվել Օրենքով ամրագրված գովազդի հեռարձակման սահմանափակումները՝ դրանով իսկ խախտելով Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝

«Պետության հայտարարած սզո և հիշատակի օրերին գովազդ և զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերով, 9-րդ հոդվածի 4-րդ մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ**

13 հունիսի 2022թ.

ք. Երևան